ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով հուշանվերների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-Ժ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.08.2019թ. ժամը 15-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով ''**Էյ Դաբլյու Այ Գրուպ'' ՓԲԸ-ի** կողմից ներկայացված Վճարման հանձնարարագիրը/ կցվում է/, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

- Հաշվի առնելով՝ որ ''**Էյ Դաբլյու Այ Գրուպ'' ՓԲԸ-ն** սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը, ինչպես նաև ''Էյ Դաբլյու Այ Գրուպ'' ՓԲԸ –ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝ ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել ''**Էյ Դաբլյու Այ Գրուպ'' ՓԲԸ** –ին:
- ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի հայտարարվում:
- Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
- «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-Ժ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով հուշանվերների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-Ժ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.08.2019թ. ժամը 12-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով **''Էյ Դաբլյու Այ Գրուպ'' ՓԲԸ** զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն և ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/ կցվում է/, արձանագրեց, որ կազմակերպությունը հայտ ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 42000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն:

Հանձնաժողովը որոշեց՝

1. ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի համաձայն՝ երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը, որպիսի ''Էյ Դաբլյու Այ Գրուպ'' ՓԲԸ -ն շտկի անհամապատասխանությունը: Համաձայն Կարգի 48-րդ կետի 1)-ին ենթակետի ա) մասի՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունների մասով արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

2. Հաջորդ նիստը հրավիրել 14.08.2019թ., ժամը՝ 15.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

Այսօր **''Էյ Դաբլյու Այ Գրուպ'' ՓԲԸ**-ին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել անհամապատասխանության մասին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան